

ՐԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարին	համար
արեկա՛ւ	12 ֆր.
վեցամս'այ	7 "
Արսասահմանի	
համար արեկա՛ւ	15 ֆր.
վեցամս'այ	8 "
Անեռիկայի	համար
արեկա՛ւ	3 ֆր.
վեցամս'այ	1.50 "

Եւանջելիսի տողը և ուրիշ երեսիս համար 40 սանթիմիտ խկ վերջին երեսին համար 20 սանթիմիտ և հրեհեկ և էլի անգլոսերու համար 20 0/0 զեղջ կրնայ:

Վանահայի համար ձեռք 10 սանթիմիտ է

ՇԱՐՋՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳՅԻՆ ՔԱՂՈՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿՐ ՀՐԱՏ ԲԱԿՈՒԻ ՉՈՐԵՔԵԱՐԹԻ ԵՒ ՇԱՐՋՈՒՄ ՕՐԵՐԸ

ОТГОВОРНИКЪ: СТЕПАНЪ КАНАРЯНЪ

Նամակ եւ դրամ որ կեղ խմբագրութեան հասցեիկն

Редакция на вѣстникъ "Шаржумъ" Варна

Redaction du journal "Charjourn" Varna (Bulgarie)

Պուշկարին համար ձեռք

15 ՍԱՆԹԻՄ

Արսասահմանի համար ձեռք

20 ՍԱՆԹԻՄ

Գրութիւնք եւ չեկ տրուիր

ՇԱՐՋՈՒՄԻ ՐԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺԵԿԻՆԸ ՊԵՏԻ ԵՒ ԿԱՆԵԿԻ ՎՃԱՐԷ

ՍԻՆՉԵՒ ԵՐԲ ԵՒ ՈՒՐ

Տարիներ առաջ նոյն այս սինչակն րումբրոյնում էր իբր հայ իբրեւ յեղափոխական, Հնչակեան եղբայրասպանութիւնների ղէմ և ժողովրդին հրաւիրում հանգիստ ծառերից կտխել նրանց, որոնք օժտված գաղանային բր նազդներով, յեղափոխական մարմինները վերածել էին ձրգտում հասարակ մարդասպան ոճրազորմների օճախի:

Այդ միջոցին, ելր Վասիկեանի օրգանը հրճվում էր տարբեր կուսակցութեան մէջ սեպի ունեցած ոճրազորմութիւններով իր շարչիական հաշիւներով պեկաւարված, Իրօչակը, Դաշնակցութեան օրգանը գալիս էր իր ինձ ձայնակցելու և իրաւացիօրէն պախարակելու ոճրազորմներին, որոնք արատաւում էին հայ յեղափոխութիւնը յեղափոխականի արիւնը սրակելով եւրպական քաղաքների պողտանեւրում:

Այսօր ոճրազորմական այդ սոսկալի ախտը բուեն է գրել և Դաշնակցութեան մէջ, և աւելի մեծ չափեր ընդունելով, տարբեր կուսակցութեան պատկանողների և թէ պարզ քաղաքացիների վերաբերմամբ, որոնք չեն հպատակվում Դաշնակցական գիւնորի, գործիչի, չէֆի—քմահաճոյ և այլն պօրիսի պահանջներին: Այսօր գաշնակցական իր եղբորը սպանում, մորթում, հարստահարում է աւելի գաղտնօրէն, աւելի լրբօրէն քան թուրքը և քորգը: Կովկասեան և արտասահմանի մամուլը լիքն է գաղանային սխրագործութիւնների երբեմն սրտսճմիկի—երբեմն միայն գարշաւք յարուցանող փառասերով—որոնք կատարված են Դաշնակցական անունը կրողների ձեռքով: Ու Իրօչակեան լաքեական մամուլը և ինքը Դաշնակցութեան այդ քստմնելի ոճիրների հանդէպ... ինչո՞վ բացատրել այդ լաու...

Թիւնը, արդեօք նրանով որ այդ մամուլը պարտաւոր սիրտ ունեցողներն էլ, յանկարծակի օժտվեցին տիրոջ գաղանային բնագործներով որ արտայայտվում է միայն եղբոր հանդէպ...

Այս ի՞նչ վատ նշաններ են մեր կազմակերպութեան յարատեւութեան և գոյութեան համար: Ո՞րքեօք մեզում էլ նոյնը չէ կրկնվում, ինչ որ սեպի ունեցաւ Հնչակեանութեան մէջ:

Պատմութիւնը գեռ թարմ է և ոչ հնացած. Անյուշտ ամեն ոք յիշում է թէ 11 տարի առաջ Հնչակեանութիւնը իր պոլքտոր շեղով ձեռք էր բերել Մայիսեան ծրագրերը, Ձէլթունի, գոնէ թղթի վրա, համեմատական պահով գրութիւնը, Հնչակի էլ չբրը զարդարվում էր ջուրի պէս թափվող խոշոր գումարների ցանկով ու այդ պիտով գոռոզացած հայ ժողովրդի ներայնում միակ ուժեղ հայութեան յոյսը, ապա էէրը ներկայացնող և նրա բախտը վճռող կուսակցութիւնը...

Սակայն, դժբախտաբար, յոյսութեան կոչելը գեռ չը լուսած, հայ ժողովրդի քսակի բերանը գեռ չը պոցված յանկարծ պատուփեց վարագոյրը և կազմակէպութեան փառասեր երեան գալով, հասարակութեան աչքի առջեւ պարզվեց թէ ըստ երևոյթին զօրաւոր յոյս և սպաւէն ներկայացող կուսակցութեան որովայնում տեղաւորվել են մեծաքանակ աւազակներ, բարոյական և մատաւոր սնանկներ, նոյն իսկ հայրենիքի և յեղափոխութեան գաւաճաններ... որոնք ցեղի արիւնը, քրտինքի արդիւնք ոսկին մեծ մասամբ գործ էին դրել ոչ թէ փրկութեան գործի, այլ պարտաւոր ոճրազորմներին պահպանելու համար... Յուսախափութիւնը սոսկալի էր և այդ միջոցին թէ գոյութիւն չունենար Դաշնակցութիւնը գուցէ հայ յեղափոխական գործը անդառնալօրէն մեռէր իրաւասակութիւնների կոյտերի ծանրութեան տակ:

Որքեօք նոյնը պէտք է պա...

տահի՞ և գաշնակցութեան հետ նշանները նման են, արդեօք հետեւաւորներն ևս նոյնը չը պէտք է լինեն... յեր նշանակցական ուղղամիտ, իրական վտանգը բժրոնոյ և բողոքող մայրերը ներկայ գաղանայութիւնների հանդէպ, թէ սպասում են որ զուտ, անկաշառ, խելքը գլխին յեղափոխական տարրեր որ աճեն մի հայ կազմակերպութեան մէջ կայ, ու արդէն իրարու հետ կապկապված է, համբերութիւնը հատած, վերցնէ վրիժառու մանգալը և սպած Ատլանտեան ովկիանոսից մինչեւ Մասիսեան ստորոտները հնձէ այն գլուխները և լեզուները որոնք հայ յեղափոխականների մէջ գաղանային բնագործներ են հրահրում և հայրենի արիւնտած հողը արիւնտում աւելի սուղ արիւնով, ու այդ պիտով պոռնկութեան վերածում այն վեհ յեղափոխութիւնը որ լուսաւորված է Ձրքարեանների, Բարկէնների, Վազգէնների, Պետոնների լուսաշող ճակատներով:

Մինչեւ ո՞ւր և մինչեւ ե՞րբ: Արդեօք մինչեւ անկախ յեղափոխականների ստեղծած կառափնարանը, ուր անկոչ չէֆերի մեղաւոր գլուխներն են թռպտալու... Նիկէ այդ է բարի ճանապարհ... յեղափոխական իրական մարտագործումը այդ կր լինի և այդ ձեւով... չը պէտք է հասցնել այդ վիճակին...

Վ Ա Ր Գ Օ

ԻՏՈՂԻՈՑ ՄՍՅՐ ԹԱԳՈՒՂԻՆ ԿԱՆԱՆՑ ԽՆԴՐՈՑ ՄՍՍԻՆ

Վիկտոր Էմանուէլ թագաւորի մայրը, որ ամուսնուն եղբրական մահէն յետոյ բոլորովին մեկուսացած կապրի, մտերս տեսակցութիւն մը ունեցած է ամերիկացի հրապարակագիր պ. Քոնթվէյի հետ և անոր յայտնած իր հայեցողութիւնները քաւնի մը ժամանակակից հրատապ խընդիրներու առթիւ:

—Չեր մեծութիւնը ինչ կը խորհրկանանց Էմանսի բարասիօնի

մասին, կըլլայ ամերիկացի օրագրողին առաջին հարցը:

—Այդ խնդր շարժման վճռողական հակառակորդ մըն եմ. ինչ պայմաններու մէջ որ դրուի կինը, անոր առաջին պարտականութիւնը պիտի ըլլայ իր սեռը բնորոշող յատկութիւններէն չը հրաժարիլ, Ամենէն առաջ կինը պիտի զգուշանայ իր մէջ զարգացնելու այրբուռն յատկանշական գիծերը: Տիպար կինը անցնալին ինքնագաղտնի և ներկայիս անկախութեան խառնուրդը պիտի կազմէ, Թող անոր արտօնուի ուսանիլ, կրթուիլ, աշխատիլ, ընկերութեան և էլ փայլիլ, կամ սուրբ մնալ, բայց սակայն պէտք է որ հայրը, եղբայրը, ամուսինը իր նեցուկը ըլլան կեանքի դրուպութիւններուն մէջ, որովհետեւ կին մը առհասարակ անկարող է այրբուռն նման ընթարձակ փորձառութիւն մը ձեռք բերել:

—Ձերդ մեծութիւն, ինչ կը մըտածէք բազմանգամ ընտանիքներու մասին:

—Ժողովուրդ մը ինչպէս կրնայ յառաջադիմել, առանց աճելու: Առանց երեխայի ընտանիք մը կատարեալ չէ. մանկութեան մէջ կայ բանաստեղծութիւն և սրամազրութիւններ որոնք կը շրջեն կանացի սիրտը: Կիներու մեծամասնութիւնը այդ կըզգայ, բայց արտայայտել չի կրնար: Անոնք մայրական բնազդ ունին և այդ ցեղ մը կազատէ ինքնաջնջումէ...

Այն կինը որ զգացած չէ մայրական շնորհը կեանքի ամենամեծ բարիքին անգիտակից է, առանց յուսելու անհրաժեշտ բացառութիւններու մասին: Քանի մը կիներ կըրնան, կը կարծեմ, ուրիշ բան մը ունենալ կեանքի մէջ, կարելի է որ ամբողջովին նուիրուած են միայն սրբազան կոչումի: Բայց ամուսնացած կին մը երբ գիտակցաբար կը խուսափի իր զաւակ ձնանելու պարտականութենէն, անկասկած է որ բարոյական պակասութիւններ ունի: Այդպիսի կինը ոճիր կը գործէ ընտանիքին և հայրենիքին հանդէպ: Ժողովուրդները զօրաւորապէս կազմուին օրինակներու ուժէն. յաճախ յսած եմ որ Անգլիոյ թագուհի Վիկտորիային ուսուցումները հրաշալի արդիւնքներ տուած են այդ պետութեան մէջ: Օրինակը մեծապէս կազդէ դեռատի օրիորդներուն վրայ: Անոնք նմանելու բարձրաստիճան բնազդ ունին, երբ երկրի մը մէջ կիները յառաջադիմեն, պիտի յա...

տափօրի վերջին օրերի և Վրաստանի (Էտուարի) մասին կը խօսենք յարմար առիթի : Զէ որ համոզված եմ թէ ինձ սպանել մտածող դաշնակցականները դեռ ժամանակ կտան ինձ ստելու այն, ինչ որ պէտք է հայ պղծին իմացնել :

Հետաքրքրվեցի և Պարսն շրջանի վերջին պատգամաւորական ժողովով : ուր և ես հրատարակեմ էի բացատրութիւն տալու համար իմ մօտ մնացած կազմակերպութեան դրամների մասին, և իմ պայմանը չընդունվելու պատճառով տէրը չեղայ : Իմացայ որ այդ խնդիրը Արեւմտեան Բիւրօյի թելադրութեամբ յետաձգված է ընդհանուր ժողովին, ինչ որ և իմ պահանջն էր : Երջանական ժողովում, բացի իմ խնդրից եղել են և երկու ուրիշ հրատապ խնդիրներ : Ընկեր ընդհանուր ժողովի համար պատգամաւոր ընտրելը, միւսը Վառնայի մի քանի դաշնակցականներին պատմելը որոնք չեն ուզել Պարսնեան կ'օմիտէի մշտական գործիչ — լիազօր պահել Վարնայում :

Ընդհանուր ժողովի պատգամաւորի թեկնածուներ եղել են Զ... և Պ... ստալինը բողոքող տարրի ներկայացուցիչ : միւսը լաքէութեան ներկայացուցչութեան կատարելատիպ : Վերջինս յաղթանակը տաքել է իր վարժուհու ձայնի օյնութեամբ, որը ժողովին մասնակցել է իւրեւ տեղային պատգամաւոր : « Լ. Գ. Ե. ր. ի. ս. կը յառաջ դիմէ կորստի » Պարսնեան շրջանի բախտը թէեւ փափուկ բայց հաստատուն ձեռքերի մէջ է... կեցցէ Յիլիպէ :

Վարնայի լիազօր պահելու պէ՞մ բողոքող դաշնակցականներին պատմել են... թէեւ մի քիչ զաւելցողական կերպով :

Ամենից ուղղադրաբար այն է որ մի կարեւոր գործիչ պատահած

տեղը քարոզում է որ արեւմտ. իւրօրոյին գրամ չը յանձնվի, ինչպէս երեւում է Լեւոպոլսում պահված խոշոր գումարներից մէկի զլխին անուղղի վորձանք է պատահել...

Վարնա հասնելով իմացայ որ, այստեղ իրարանցումը անելի մեծ է : 13 խումբեր բաժանուած են, նախորդ կօմիտէի անդամներին ապօրէն կերպով յանդիմանութիւն տրվելու պատճառով : Վարնա եկող լիազօրը հարկ ծեծվելուց է ազատվել : ազլկանց խումբը իր միջից արտաքսել է մի յայտնի ինտրիգան օրիորդի, որին անցեալները պարտաւորվել էր և վարժուհու պայտօնից վաճառել հոգաբարձութիւնը : Ի՞նչ ժամված խմբերը տեղական դաշնակցականների մեծամասնութիւնը կազմելով որոշել են լիազօրին (չենք հասկանում ինչ իսկազօրութիւն է այս) չը յանձնել ոչ գոյրեր և ոչ գրամ : Նոյն խառնակ կացութիւնը տիրում է Պարսնայի բոլոր քաղաքներում հակառակ տեղական օրգանի շարժառնական յայտարարութեան, որ դաշնակցութիւնը իր լիազօրիայում փայլուն վիճակի մէջ է :

Երջանական ժողովին մասնակցել են և ուրիշներ, գործիչ անւան տակ, պատգամաւորների վրա ճնշում բանեցնելու համար...

Վ.Ս.Ր.Օ

Վ Ե Ց Ա Մ Ի Ս Պ Ա Ր Ի Զ Ո Ւ Ս
(Տպաւորութիւններ)

Արդէն երկարատեւ աշխատանքից յոգնած եւ երկար ճամբորդութիւնից քողորովին ջախջախված հասնում եմ Պարիզ : Ճիւղաւորի, աշխարհի մարդկային ամենագեղեցիկ ամենանոսր յատկութիւնների կենտրոնը, քաղաքակրթութեան գիտութեան, մտլու թիւնների օճախ... ձմրան, նոյն մեր վերջերի առաւօտ է : վազոնում շեմ կարողացել քնանալ մի քիչ

թոռներ վաճառել շինուած հայ արհեստաւորների ճարտար ձեռքով : բայց սեղանի նման ոչ մի բան չկար այնտեղ : այդ պատճառով հիպատոսը բաւական նեղուցեց ճաշելու կամ գրելու վասնզի այդ գործողութիւնները ըստ արեւելեան սովորութեան գետնի վրայ նստած ծաղկապատիկ ոտքերով (կոնսուլի սրուճները շափազանց երկար էին) պէտք էր կատարել : որ քիչ զժուարսութիւն չպատճառեց նրան :

Միւս օր առաւօտեան Եէյխը բարեհաճեց սեզ աչքելու և «խոշ ասեղի» ասել : նրան ընկերանում էին իր մեծ որդին Եէյխ Մէյնիկը Սաղրդը, Աբդուլ Գաղըրը և թարգմանի՝ Սէյիկ Մէյնիկը Սաղրդը : նա 45-50 տարեկան մի մարդ էր երկայն հասակով, սեփ սեւ մազ ու մօրուքով և հասկած էր ձիւնի պէս սպիտակ շորեր գլխին ճերմակ ամաման, միայն

ձեռքից կախ թողած թէ կ'ըլ է Է ըր դեղին գոյն ունէր քահարի բար լինելով : նրա նայուածքը բարեբարոյ էր, գրաւիչ ու յարգանք ազդող : նա նստեց մի դիվանի վրայ հիպատոսին հետ դէմ առ դէմ իսկ միւսները ոտի վրայ կանգնած մնացին ի յարգանս : նա քրդերէն էր խօսում թե թեւ իրանց ազգայ պաշտօնական լեզուն համարելով այն, իսկ թուրքերէն կամ չգիտէր նա ռուսերով կամ գիտմամբ չէր ուզում խօսլ այդ իրանց այնքան ատելի լեզուով որին նրանք «լեւանը ռոմի» յուճաց լեզու են անուանում :

Այս առջի տեսակցութեան նպատակն միմեանց հետ ծանօթանալը լինելով, միայն առաջ պատշաճի խօսքերով անցաւ, և համարեալ իր կէս ժամու շափ տեւեց : Եէյխը իր խորին գոհունակութիւնը յայտնելով կոնսուլին այն մեծ պատուին համար

էլ յրեւել եմ — եւ միայն հանգստութիւն եմ փնտռում...

Նոր արթնած հսկայական քաղաքը իր վճռոցով, աղմուկով ու շարժութիւնս չէ գրաւում — հանգիստ եմ թէ այս անգամ երկար եմ մնալու այդ սարօրինակ հնով, նորով հարուստ մայրաքաղաքում : որովհետեւ եկել եմ ինձ համար, բացարձակապէս մի առ ժամանակ ապրելու համար այդ մարդկային ստեղծագործութիւնների, հանճարի, կամքի կորովի կենդանութեամբ մաքառման հին և նոր օրինակներից ուժ եւ կորով — միտք եւ եռանդ սրակելու երակներս մէջ — որոնք հայկական ազոտտ կեանքի ազոտտ մաքառման մէջ կարծես մաշված լինելով վելանորդ վելու անհրաժեշտ պէտքն են զգում... Նկարագրները կտնորոնք մտաւոր աշխատութեան եռուն պայքարների խնջումներից յետոյ հանգստութիւն են որոնում փոքրիկ, բանաստեղծական վայրերով չըջապատված լուռ տեղերում : Ես տոյ տիպերից չեմ : ընդհակառակը կազդուրվել եմ սիրում դիտողի դերում հսկայական այն վայրերում ուր մարդկային բողոքութիւնը մըջիւնական լուով խոնւած, գոյութեան պայքարն է մղում իր անհատական և ընկերային վիճակը բարեփոխելու իր գոյութեան, յարատեւութեան պայմանները յեղաշրջելու համար :

Ար ընկերային պայմաններու շատ օրէնքներ արդէն վերջացել են և մարդը գրեթէ մերկապարանոց երեւան է դալիս իր հրապուրիչ, կազդուրիչ, վեհ և միեւնոյն ժամանակ գարշելի յատկութիւններով... ուր կեանքը բոլորովին չէ նմանում իմ արդէն անցած կեանքին և իմ ուղեղին կարող է տալ տարբեր նիւթեր տարբեր հարցեր... դուրս մտածելու շարժական նեղ շրջանակներից ուր ամենահամարձակ և սուր ու ղեղները կամաց կամաց հաւասարվում են միջավայրում վիտացող գոեհիկ ուղեղով, գոեհիկ բնագոյներով օժտված մարդկային ստոր տարբերի մակերեւոյթին... և եթէ ժամանակին դուրս չը փախչես դու էլ կը սկսիս մտածել և ապրել քեզ շրջապատող ստորին տարբերի պէս որոնք այսօր մեր հրաբորքը կեանքի կարեւոր դերակատարներն են հանդիսանում շեղհի կեանքի ուղղութիւն տալու բարձրագոյն տիպերի բացակայութեամբ : Եւ իրօք դիտենք մեր կեանքը, այսօր շեղհի մեր

կեանքի քառասունը գրութեան — ինչով է տարբերվում ու եւ է շարժման պարագլուխը ժողովրդի ստորին խաւերի ներկայացուցիչներից, իհարկէ խօսքս յարգելի բացառութիւնների մասին չէ : ոչնչով, ժողովրդային պէս պէս հաստատութիւնների վարիչները իրենց մտածելու եղանակով դատելու խօսելու ձեւով, նիստ ու կացով նոյնն ներկայացնում, ինչ որ նրանցից խելք, միտք, քառասուն վիճակը շտկելու միջոց սպասողները...

Թողնենք առ այժմ հային, նրա այս ցաւերը իհարկէ սուր կերպով և խայթիչ պատկերացաւ ինձ հէնց Պարիզում ստացած տպաւորութիւնների պատճառով... ուր տարիներով ապրող հայը — ուսանող, գրող, խմբագիր նոյն հայն է մնացել գրեթէ և փոփոխութիւնը միայն շարժութեան զգեստների մէջ է կայանում : Պարիզ հասնելուց յետոյ, առանց քաղաք շտպելու դիմեցի կայարանի մօտ գտնվող մի հիւրանոց :

Հանգստանալուց եւ նախաճաշելուց յետոյ առաջին գործս եղաւ ընկեր Լօրիսին գտնելը : Դրօշակի տխրահոլակ յայտարարութիւնից յետոյ պէտք էր անմիջապէս որոշել թէ երկուսիս յարաբերութիւնները ինչ կերպարանք են ըստացել... բարեբախտաբար յոյսերս ի դերեւ չեղան : Լօրիսը ինձ համար նոյն էր մնացել, ինչ որ էր... և ինքը իրբեւ անհատ կազմակերպութեան միջ ըմբոստ և արդէն յարաբերութիւնները խզած Արեւմտեան Բիւրօյի հետ...

Այդ օրը ամբողջովին իրարու հետ անցնելուց յետոյ, երկուսեան միայն դուրս եկանք ճաշելու, որից յետոյ նա ինձ ծանօթացրեց մասնաւորապէս մի հայ կովկասցի ուսանողի հետ : Ուսանողի և ուրիշ երկու պարտնների հետ մինչեւ գիշերվան ժամը երբն անցնելուց յետոյ, ես ուզեցի վերադառնալ հիւրանոց :

Ոչ արամվայ կար և ոչ կառքեր էին երեւում...

— Մի գնացէք, վտանգաւոր է, այս մօտիկ հիւրանոցում պտկեցէք, յայտնում է ուսանող Ա :

— Ինչ վտանգ, Պարիզում հարցնում եմ ես : արեւելքում չենք կարծեմ :

— Պարիզի օապա չն երբ ևս, պարզ մարդասպաններ — թալանելու համար : ամեն օր այդ տեսակ մի քանի սպանութիւններ կան :

առատ պէտք է լինէր, քանզի մենք պատահեցանք մի քանի վճիտ ազգիւրների, որից քրդ ու հիբ սափորներով շուր էին տանում, իրենց պարզութեան մէջ նրանք բաւական սիրուն էին : Երկուսում մենք պատահեցանք վանեցի արհեստաւորների և վաճառականների, որոնք հանգիստ իրանց գործին էին : Ակներեւ էր որ Եէյխը քաջալերում էր օտարազգի եկուորներին իր գիւղը շէնցնելու, որոնց նա իհարկէ մեծ պէտք ունէր, նկատելով որ քրդերը առհասարակ արհեստների ու վաճառականութեան չեն հետեւում : նրանց աղքատ դասակարգը միայն երկրագործութեամբ է պարապում, իսկ հարուստները սաղ օրը պարապ սարապ ման են դալիս :

Մուրճ

(Շարունակելի)

— Բայց Պարիզի ոստիկանութիւնը հարցնում եմ ես. հռչակված ոստիկանութիւնը չէ՞ կարողանում այդ ոճրագործութիւններին առջեւը առնել...

— Ոչ. թէեւ ընթէն էլ շատ զոհեր է տալիս ապաշիններին:

Հաւատալի չէ՞ զալիս, կարծում եմ թէ երբտասարդը կատակ է անում եւ ուղղակի երկար ճամբա անցնելուց ուզում ազատել ինձ: Սիւս ուղեկիցներն էլ են սկսում համոզել եւ շատ լրջութեամբ. ես երկարկում եմ ու Ս. Միշէլ բուլվարի վրա, մի հիւրանոցում պարկում:

Ինչ են Պարիզեան կեանքի այդ արտադրութիւնները «ապաշիններ», որոնց համար մարդկային կեանքը սանտիմ չարժէ: Պոնտիկ փողոցային կիներ պահողներ... դատարկաշրջիկներ, որոնք իրենց սիրուհիներին որոնց հաշուով եւ ապրում են, գործ են անում իբրեւ թակալի մէջ հրապուրողներ նեղ, ամառի փողոցներում, մութ անկիւններում մի քիչ հեռու կանգնելով իրենց սիրուհիներից նրանք ոստիկանի պէս հետեւում են ինչ սիրուհուն որ զազունի յաճախորդ են արդիւնք չունենայ եւ սիրուհու ձեռքը ընկած զոհին կամ փողոցում, կամ մի դարանավայրում թաւանելու համար: Այդ ապաշիններ հաճոյքի համար, նոյն իսկ մեծ բուլվարներում էլ են մարդիկ սպանում: Այս ձեռք, մի հոշակաւոր լապաշ» իր ընկերներէի առջեւ պարծենալով որ կարելի է եւ բուլվարի վրա մարդ սպանել, մի թեթեւ գրաւով, ընկերների հետ բուլվար է գուրս գալիս եւ իրօք մի քաղաքացի սպանում... Պարիզի հսկայական եւ ճարպիկ ոստիկանութիւնը չէ՞ կարողանում այդ ոճրագործութիւններին առջեւը առնել: Կառավարութիւնը մտահոգ կացութեան մէջ է, չափը անցնելուց յետոյ սյժմ նա վճռել է ոստիկանները թիւը աւելցնել եւ պարտաւորել զարձնել որ ամեն մի ուշ մնացած քաղաքացուն մի ոստիկան ընկերակցէ մինչեւ իր բնակարանը:

Ապաշիններ իրենց սպանութիւններով մեծ ալիւնք էլ չեն ստանում. չը նայելով երբեմն շնչին գումարի համար մարդ սպանելով կամ վիրաւորելով, բաւական խիստ պատիժներն են ենթարկվում: Եթէ չեմ սխալվում «Մաթէն»ի մէջ մի հաշեցուցակ կար, որից երեւում էր թէ ապաշինների զոհերի գրգռանքից գտնում 1, 2, 5 10 եւ շատ հազարէպ պարագային 100—300 ֆրանք: Փողոցային պոնտիկների եւ ապաշինների ընկերակցութիւնը Պարիզի եւ Թրանսայի մի քանի մեծ քաղաքներին համար մի պատուհաս է կատարելապէս եւ Պոլսոյ Զմիւռնիոյ Բաքուի անհատական սոկայ սպանութիւնները ոչ մի համեմատութեան չեն կարող գրվել ապաշինների ոճիրների քանակութեան հետ:

Ապաշիններ հրազէն չեն գործածում. այլ զաշոյն եւ հարածը մեծ մասամբ տալիս են զոհի ետեւից ուսերի մէջտեղը խրելով զաշոյնը:

(Շարունակելի)

ԱՅՑ ՆԱՄԱԿ

Երկարատեւ բացակայութիւնից յետոյ վերադառնալով Վարնաներոցութիւն եմ խնդրում այն

ընկերներին, համակիրներին և բարեկամներին, որոնց նամակներին չեմ կարողացել ժամանակին պատասխանել: Ա. Երոզ շեմ համարում մասնաւորապէս ծածկասանում, Ամերիկայում, Եւրոպայում ինձ համակրող և իմ կազմակերպութեան միջեւ ծագած խնդիրների ելքովը հետաքրքրվող ընկերներին յայտնել որ Պալքսանեան շրջանական ժողովում որոշվել է իմ խնդիրը թողնել ընդհանուր ժողովին: Այսինքն տեղի է ունեցել այն ինչ որ ես գեռ խնդիրները ծագած օրերում պահանջում էի:

Այս որոշումն էլ պաշտօնապէս զալիս է ապացուցանել որ սրի կայական տարածայնութիւնները բոլորովին վաղաժամ և առանց օրինական քննութեան և վաւերացման են եղած: Ապացուցանում է նաեւ որ Դաշնակցութեան որոշ մարմինները հակառակ իրենց բուն ցանկութեան իմ խնդիրը վերջացնելու նախքան ընդհանուր ժողովի գումարումը, աստիճանաբար պարտաւորեցին իջնել իրենց խալտերական բարձրութիւնից և մտնել զիջողութիւնների շրջանի մէջ...
Վ. Բ. Դ. Ս.

Վարնա, 21 յունիս 1906

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Եզրպտոսի խրատիվը որ վերջերս Պոլիս կը գտնուէր, ինչպէս ամեն տարի իր մօրը քով, Սուլթանէն շափաղանց վշտանալով անմիջապէս Պոլիսը ձգելով Եզրպտոս մեկնել է:

Խրատիվին վշտանալուն պատճառը հետեւեալն է:

Տարիներ առաջ Սուլթանը խրատիվի մօրը Զիպուկուի պալատը նուիրած էր: Այդ պալատը աշտարակ մը ունի, որ իբրև զարդ մը մրայն կը համարուի պալատին համար: Սուլթանին լրտես պաշտօնեաները համոզած են որ խրատիվը անվիրացոց լրտեսութիւն կը ընէ և տշտարակը կրնայ յարձակում գործելու տեղ մը ըլլալ եթէ վրան թնդանթները գրուի ինչպէս կուզէ եզերընել խրատիվը: Իսցի այդ աշտարակը բաւ ձր ըլլալով կրնայ զի տարանի տեղ ծառայել և եթէ անթիւ հեռագրով միացուի Բրինքիբօ կղզիին հետ, կրնայ հազորդակցութիւն ունենալ անգլիական պատերազմական ջնաւրուն հետ, որոնք կրնան մօտենալ Տարտանէլին և այդ աշտարակի միջոցաւ քաղաքական և թուրքիոյ պաշտպանական կացութեան մասին տեղեկութիւն

ներս առնել: Սուլթանը այդ չաբարաստիկ աշտարակը առանց այլեայլութեան քանդել տուած է: Խրատիվը այդ կասկածներու և կարգադրութեան մասին այնքան բարկացած է որ Սուլթանի քովէն զուրս ելած միջոցին զուրս աւուր զարկեր է և իր պալատը գալով անմիջապէս պակածները պատրաստել տալով էքսպրես թրէնով զէպի Վիէննա մեկնած է:

Ռ Ո Ւ Ս Ի Ա

Մայիս 25 ին երեկոյեան մամր 7 1/2 ին Ռիֆլիսի Գիօրցով պուլվարի վրայ իր խառնութիւն մէջ զաշոյնահար վիրաւորուած է կոչկալստ Պոլսեաներ 18 տարեկան պատանիէ մը: Սճարգործը ձերբակալուած է: Երբ օրրատրածանակի հինգ հարուածով նէյթան փողոցի վրայ սպաննուած է վաճառական Կէորգեանը: Կենյատեցած է հայ մը: Արտենալ փողոցին վրայ ալ երկու շարագործներ կեցուցած են հայ կին մը և մատեն բանի հանած են մատանին: Միքսէլեան փողոցին վրայ ալ 3 շարագործներ իմանալով որ պարտնի մը մօտ 500 յուպլի գրամ կայ, գետին գլորած, ծոցէն զրամները առած ու անյայտացած են անպալմ: Երբ փողոցին վրայ ատրճանակով վիրաւորուած է Աբել Մարգարեանը:

— Եւլախ—Եուշի արքունական ճամբուն վրայ Աղտամի մօտ 50 կրնուած թուրքեր յարձակած են հանրականքերով Եուշի գոցողներուն վրայ և գերի տարած են 12 հայեր, որոնցմէ երեքը կրնել են: Գերեալներու մասին ոչ մէկ տեղեկութիւն չկայ: հայերը շատ յուզուած են: Կը սպասուին նորանոր ընդհարումներ:

— Ներքին գործոց նախարարութիւնը վարչական իշխանութեանց շրջաբերականներով հրամայած է հազարային կազմակերպութիւն կոչուածներու, որոնք ժողովուրդը կը գրգռեն, գործունէութեան արգելք հանդիսանալ:

— Բրէքօրօմիներն թիկնապահ գնդի առաջին վաշտը արտաքուսելով թիկնապահ գնդէն պարզ կրնուորներու վերածուած է և իր պետերուն հետ մրասին, իշխան թրաքեցկոյի և ուրիշներ: Սիպերիա զրկուած: Հրամայուած է առանձին գատարան կազմել ըմբոստ կրնուորները դատելու համար:

— Պալատէն քանի մը կարելոր պաշտօնեաներ արտաքուսած են, որովհետեւ կայսեր սենեակներուն մէջ յեղափոխական կոչեր են գտնուած:

— Պաթում, Վլատկալփազ կրնուորական ըմբոստացումներ

կան: Պալատական զօրքի ըմբոստացած մասը ի թիւս զուտ իրենց վերաբերեալ պահանջներու պահանջած է նաեւ որ գիւղացիներու պահանջները կատարուին:

— Նախարարական խորհուրդը խորհրդածութեան ենթարկելով ինչ ծուռութիւն հանդէպ ինչ զիրք պէտք է բանել, որոշած է բոլոր հարցապնդումներու և պատասխանել, բայց բոլոր ճառախօսներուն յարձակումներուն չը պատասխանել:

— Դեօլոյէ Վ. Էմիպայի ըսելով նախարարական փոփոխութեան մասին տարածուած լուրերը բոլորովին անհիմն են: Երբ թեթիվը կը հազորդէ որ նախարարութիւնը կտրուկ կերպով որոշում յայտնած է խիստ միջոցներ ձեռք առնել հակահրէակունցոյցերու առջեւը առնելու համար:

ՆՆԳԼԻՍ

Անցեալ շաբթու տեղի ունեցաւ անգլիական նաւատորմի դիմաւորական նաւաշարի մէջ հակառակական նաւաշարին մասնակցած են 400 պատերազմական նաւեր, զանազան տեսակի:

— Ըստ Լոնտօնի թերթերու պատերազմական նախարար Կոլոլ ամսուս երեսփոխանական ժողովին պիտի յայտարարէ որ պիտի կտրենայ պատերազմական ծախքերը զգալի կերպով նուազեցնել:

ՅԻՆՆՍԱ

Տրէյֆուսի գործը վերաքննող բաւձրագոյն զատարանին առջեւ զլիսաւոր դատախազ Պոտուէն որ յայտարարած էր Տրէյֆուսի անմեղութիւնը, խօսած է սպառնալի վարչութեան մէջ տեղի ունեցած էնթրիգներու մասին, որոնց պատճառով և Էստէրհայի արգարացած է:

Գ Ր Ի ՏՆՂ ԵՒ ԹՈՒՐԻՍԻԱ

Յեթիիէն Վիէննա կը հազորդեն հետեւեալը: Ամսոյս 18 ին թուրք զօրքերը և սլաւոնացիներ հրացան պարպեր օն կալիալի սահմանապահ զօրքերուն վրայ: Իեակովեցի քովերը սպաննուած են կրնուորներ և Գարատալի կառավարութիւնը խիստ բողոքագիր մը տուած է թուրք կառավարութեան:

ՅՍՏՍՐԱՐՈՒԹԻՒՆ

Նկարիչ Յէթֆաճեանի Անիի աւերակների գունաւոր եւ գեղեցիկ աւրօմները եւ փոստ քարտերը մեծ քանակութեամբ ծախվում են Վիէննայում պ. Գ. Ամատունու մօտ:

Ալբոմի գինը, փոստի ծախքով, 3 քրօն է, իսկ փոստ կարտերի հատը փոստի ծախքով 20 հելլէր:

Պէտք է գիտնել հետեւեալ հասցէին. Գ. Ամատունու

Սդ. Բուլվըր Կաս թիւ 3 զիր 32. Վիէննա